ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Գեւորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեր նորագույն պատմության ազգային եկեղեցական բացառիկ գործիչներից էր, որն օժտված էր բացառիկ գիտական իմացությամբ եւ վառ անհատականությամբ, նուրբ դիվանագիտությամբ, խոր հավատքով եւ այլ շնորհներով, որոնցով կարողացավ իր գիտակցական ողջ կյանքի ընթացքում անվարան, անտեսելով խորհրդային իշխանությունների ստեղծած անտանելի դժվարությունները, ծառայել Հայոց Եկեղեցուն[1]:

Վեհափառի կենսագրության ամենավառ էջերից են նրա գործունեության տարիները որպես Վիրահայոց թեմի հոգեւոր առաջնորդ:

1921 թ. Գեւորգ սրբազանը, որպես կաթողիկոսի ներկայացուցիչ, մեկնում է Թբիլիսի՝ Վրաստանի թեմի եկեղեցական գործերը կարգավորելու: 1922-ին գումարված թեմական պատգամավորական ժողովը նրան միաձայն ընտրում է թեմի առաջնորդ[2]: 1925 թ. նա վերընտրվում է թեմի առաջնորդ, սակայն 1926թ. հրաժարվում եւ վերադառնում է Ս. Էջմիածին:

1927 թ. ընտրվում է Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ: 1928 թ. Գերագույն Խորհրդի եւ Կաթողիկոսի կարգադրությամբ գործուղվում է Թբիլիսի՝ այնտեղ ծայր առած ազատ եկեղեցական շարժումը դադարեցնելու: Թեմի նախկին առաջնորդի անունը բավական էր, որպեսզի այդ շարժումը դադարեր:

Խորհրդային իշխանությունների ձեռամբ ծնված «ազատ եկեղեցական» շարժումը կամ նորոգչական հոսանքը Կովկաս եւ Հայաստան թափանցեց 1922-23 թվականներին՝ որպես «ըմբոստացում» պաշտոնական Եկեղեցու դեմ: Հայ «ազատ եկեղեցականների» ղեկավարներն էին Բենիկ վարդապետը, քահանաներ Մեսրոպ Մելյանը, Ներսես Քաջբերունին, Իգնատիոս Մանվելյանը եւ ուրիշներ:

Իրենց նպատակին օգտագործելով այդ շարժումը՝ Հայաստանի իշխանություններն սկսեցին զանգվածաբար փակել եկեղեցիները:

Հայ եկեղեցիների փակման այլ ուղի ընտրեց Վրաստանի ղեկավարությունը: Այստեղ 1924 թվականի հուլիսի 9-ին Արդարադատության եւ Ներքին գործերի ժողկոմները հրահանգ ստացան կրոնական համայնքների գրանցման վերաբերյալ: Այդ հրահանգի 5-րդ կետի համաձայն՝ Թիֆլիս, Քութայիս, Բաթում եւ Սուխում քաղաքների կրոնական համայնքները պետք է որպես կանոն ունենային 1500-ից ոչ պակաս, իսկ հայերի համատեղ բնակության մյուս վայրերում՝ 300-ից ոչ պակաս ծուխ: Այս

1 Տե՛ս *Տ. Եղիշե ավագ քահանա Մարգարյան*, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ. Գեւորգ Զ. Չորեքչյան, «Նշանավոր ճեմարանականներ», պրակ Ա, Ս. Էջմիածին, 2005, էջ 91:

2 ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3153, թ.19:

հրահանգը անհեթեթ էր եւ անիմաստ, քանի որ հայ հավատացյալների թիվը միայն Քութայիս քաղաքում 600-ից չէր անցնում: Հրահանգի համաձայն՝ քաղաքներում բնակվող հայերը եկեղեցական համայնքի իրավունքից զրկվում էին: Վրաստանի կենտգործկոմին ուղղված իր բողոքում վիրահայության հոգեւոր առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Չորեքչյանը գրում է. «Հրահանգի կիրարկման պատճառով Հայ լուսավորչական եկեղեցիների զանգվածները Վրաստանի սահմաններում կփակվեն, եւ հավատացյալ զանգվածները կզրկվեն հավատքը դավանելուց իրենց եկեղեցու ծեսերով»[3]: Եպիսկոպոսը Վրաստանի կենտգործկոմի ուշադրությունն էր հրավիրում այն փաստին, որ ինքը ծանոթ է ՀամԿ(բ)Կ 13-րդ համագումարի որոշումներին: Ասես ունկնդրելով Գեւորգ սրբազանի խոսքերը՝ Վրաստանի կենտգործկոմը 1924 թվականի նոյեմբերի 21-ին ընդունեց N 124 որոշումը, որտեղ գրված էր. «1. Վերացնել կրոնական համայնքների եւ ՎԽՍՀ քաղաքացիների կրոնական պաշտամունքի ազատ կատարման վրա սահմանափակումներ դնող այժմ գործող բոլոր որոշումները, հրահանգները եւ վարչական կարգադրությունները. 2. ...ՎԽՍՀ քաղաքացիները օգտագործման համար կարող են ստանալ վանքերն ու իրենց հավատքի աղոթատները, կրոնական ծիսակատարությունների համար նախատեսված գույքը՝ այդ նպատակով կազմավորելով կրոնական համայնքներ՝ յոթից ոչ պակաս հիմնախնդիրներով... 5. Կրոնական համայնքը կարող է լուծարվել միայն ներքգործժողկոմատի կարգադրությամբ այն դեպքում, եթե նա իր գործունեությամբ օգտագործի ՎԽՍՀ սահմանադրությանը եւ նրա օրենքներին հակասող մեթոդները: 6. Այն հիմնարկություններն ու անձինք, որոնք, ինչ գնով էլ որ լինի, եթե արգելում են եկեղեցիների, աղոթատների եւ այլնի բացմանը, կամ էլ թույլ են տալիս հոգեւորականների հետապնդում՝ ծիսակատարությունների համար, պատասխանատվության կենթարկվեն որպես իշխանազանցներ...»[4]: Եթե այս որոշումը տարածվում էր որեւէ եկեղեցու վրա, ապա այն չէր վերաբերում Հայ Առաքելական Եկեղեցուն: Հայ Եկեղեցու համար դա սոսկ ոչ պիտանի մի թղթի կտոր էր, որ հնչում էր որպես ծաղր, քանի որ բոլշեւիկները իրենց իսկ կողմից հնարված օրենքները անտեսում էին:

Միայն 1923-24 թվականներին Խորհրդային Վրաստանում վարչական միջոցներով փակվեցին հայկական 41 եկեղեցիներ Փոթի, Քութայիս, Բաթում, Ախալցխա, Գորի, Աղնախ, Թելավի, Շուլավեր, Դուշեթ քաղաքներում եւ մի շարք գյուղերում: Քանդվել էր Թելավիի հայկական տաճարի մեծ զանգակատունը: Հիմնովին կործանվել էր պատմաճարտարապետական արժեք ներկայացնող Սղնախի հայկական տաճարը: Թիֆլիսում միայն 1924 թվականի օգոստոսին փակվեց 15 եկեղեցի, իսկ 1923-24 թվականներին՝ Վրաստանում եւս հայկական 56 եկեղեցի: Հայկական եկեղեցիների աննախադեպ, զանգվածային փակման պատճառով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե-ը տագնապալի մի նամակ գրեց ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ա. Ռիկովին, որում ահազանգում էր. «Խորհրդային օրենքներով սահման-

3 Անդ, գ.568, թ.17:
4 Անդ, գ.613, թ.19:

ված խղճի եւ հավատի ազատությունը, ցավոք, Անդրկովկասում, որոշ տեղերում, սահմանափակվում է վարչական միջոցներով:

Խորհրդային Վրաստանում 1923-24 թվականներին վարչական միջոցներով փակվել է հայկական 56 եկեղեցի, իսկ Խորհրդային Հայաստանում՝ 20: Հայտնելով վերոհիշյալի մասին՝ թախանձագին խնդրում եմ Ձեզ, նախ՝ ստեղծել Էջմիածնի վանքի եւ Ամենայն Հայոց կաթողիկոսության իրավական այնպիսի վիճակ, որպեսզի Էջմիածնի կաթողիկոսի լիազորներն ու ներկայացուցիչները կարողանային արտասահմանում օգտվել ԽՍՀՄ-ի դեսպանների եւ հյուպատոսների հովանավորությունից եւ ապա՝ Ձեր հեղինակությամբ եւ բարոյական ազդեցությամբ ներգործել Անդրկովկասյան Ֆեդերատիվ Հանրապետության համապատասխան մարմինների վրա, որպեսզի վերացվեն ամեն տեսակի սահմանափակումները եւ ճնշումը, որ կիրառվում են վարչական մարմինների եւ անհատների կողմից՝ հակառակ գոյություն ունեցող պետական օրենքների եւ դիրեկտիվների»[5]:

1925 թվականի հոկտեմբերին Վրաստանի կենտրոնը Թիֆլիսի հայոց թեմից խլված Գուկինյան թաղամասի Ս. Աստվածածին եկեղեցին հանձնեց Հանրապետության պիոներական կազմակերպությանը: Վիրահայության հոգեւոր խորհրդի բազմաթիվ խնդրանքները՝ եկեղեցին վերադարձնելու վերաբերյալ, մերժվեցին: Եկեղեցու ունեցվածքը բռնագրավվեց: Նույն թվականի հունիսին, օգտվելով վիրահայերի հոգեւոր առաջնորդ Գեւորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի բացակայությունից, Վրաստանի վարչական մարմինները կնքեցին առաջնորդարանի շենքը՝ վանքի տաճարի բակում: Այդ շենքում էին գտնվում հոգեւոր առաջնորդի բնակարանը, գրասենյակը եւ թեմական խորհրդի սենյակները: Այնտեղ եղած ողջ կահույքը, որ պատկանում էր հոգեւոր թեմին, բռնագրավվեց եւ վաճառվեց: Այդպիսով, փաստորեն, թեմական առաջնորդը բռնի ձեւով հեռացվեց առաջնորդարանի շենքից:

1926 թվականի հունիսի 14-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե-ն իր կոնդակով Հայ Եկեղեցուց անջատված հայտարարեց այսպես կոչված «Ազատ եկեղեցական եղբայրությունը» եւ նզովեց այն: Այնուհանդերձ, 1926 թվականի նոյեմբերի 12-ին Հայաստանի կառավարությունը «Ազատ եկեղեցական եղբայրությանը» հանձնեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եւ Ղարալագյազի Ս. Խաչ եկեղեցիները: Թիֆլիսում փակվեց եւ «Ազատ եկեղեցական եղբայրությանը» հանձնվեց Քամոյան Ս. Գեւորգ եկեղեցին: 1927 թվականի նոյեմբերին, երբ տեղի «Ազատ եկեղեցական եղբայրության» ղեկավար, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից կարգալույծ հռչակված Բենիկ վարդապետը քարոզ էր կարդում, իսկական հավատացյալների մի մեծ բազմություն, զայրացած ինքնակոչ հոգեւորականների արարքից, ներխուժեց այդ եկեղեցի ու ծեծի ենթարկեց ինչպես քարոզչին, այնպես էլ նրա կողմնակիցներին:

Փաստաթղթերի սույն հավաքածուում ամփոփված են Գեւորգ եպս. Չորեքչյանի զեկուցագրերը, որոնք հրապարակվում են առաջին անգամ: Դրանք գալիս են նկա-

5 Անդ, գ.598, թ.3:

պելի չափով լուսաբանելու նրա հոգևոր գործունեության, հատկապես մեր կյանքի ամենամղձավանջային պարիներին վերաբերող նրա փոկուն, անվհատ պայքարի շատ էջեր, պայքար, որի նպատակն է եղել անաղարտ պահել Ս. Էջմիածնի դարավոր իրավունքներն ու ավանդույթները, Հայ Եկեղեցու հեղինակությունն ու վարկը, Մայր Աթոռի հետ Վիրահայոց թեմի սերտ կապերը: Վավերագրերը հստակորեն ցույց են տալիս նաև Մայր եկեղեցու, հայրենիքի, սեփական ժողովրդի բախտի ու ճակատագրի հանդեպ ապագա Հայոց Կաթողիկոսի ցուցաբերած պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումը:

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ
ԳՈՀԱՐ ԱՎԱԳՅԱՆ

Փ. 1

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴԻՄՈՒՄԸ ԹԵՄԻ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿՈՉՈՎ

N 303 27 դեկտեմբերի 1923 թ.
Տփխիս

Վրաստանի թեմական եկեղեցական խորհուրդը, նոր իրաւակարգի համաձայն, իրաւատէր չլինելով օգտագործել իր տնտեսութեան մի շարք նախկին աղբիւրները, անկարող է պահպանել Առաջնորդարանն ու խորհուրդը ամենահամեստ բիւդջէյով անգամ, ուստի ստիպուած է դիմել կամաւոր հանգանակութեան իր ծանր կացութիւնից ելնելու համար, մինչեւ որ հնարաւորութիւն ստեղծուի պատգամաւորական ժողովի գումարմամբ այդ հաստատութեանց ապագայ վիճակը տնօրինել:

Խորհուրդս վստահ է, որ հայ հասարակութիւնը, յիշեալ հաստատութեանց անհրաժեշտութիւնը զգալով, սիրով ընդառաջ կերթայ այս առաջարկին եւ չի զլանայ իր ջերմ օժանդակութիւնը՝ ազատելով այդ հաստատութիւնները փակման վտանգից:

Հանգանակութիւնը կկատարուի վաւերացրած տետրակներով խորհրդից ընտրուած յատուկ Յանձնաժողովի ձեռքով: Սոյն տետրը յանձնուած է քաղաքացիներ Պապաջանեան Ասլանին, Աշուղբաբեան Աղէքսանդրին, Տէր-Սարգսեան Արամին, Սարիբէգեան Սինաքսարին եւ Մամասախլիսեան Յովհաննէսին:

Առաջնորդ թեմի՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 5, թ. 4, բնագիր, ձեռագիր:

Փ. 2

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՅՄԱՆ ԴԵԿՐԵՏԻ ԵՒ ԱՌԿԱ ԴԺՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N 2 10 յունուար 1924թ.

Տփխիս

Ս. Էջմիածնի Գերագոյն Խորհրդին

Վրաստանի ЦИК-ի[6] փարուոյս Նոյեմբերի 21-ի N 124 դեկրետը[7] եւ НКВД-ի[8] եւ НКЮ-ի[9] լրացուցիչ բացատրական հրահանգը, որ ներփակ ուղարկում եմ՝ աւելում են եկեղեցիների բացումն ու պաշտամունքի ազատութիւնը Հանրապետութեանս սահմաններում: Կորրեկտութեան եւ հետեւողականութեան տեսակէտով հեռագրով յայտնեցի Վեհափառ Հայրապետին եկեղեցիների բացման մասին, քանի որ նոցա փակումը հեռագրով էի հաղորդագրել: Սոյնպէս նաեւ Տփխիսի հայ համայնքների գոհունակութիւնը՝ եկեղեցիների բացման առթիւ ու ապագայ ակնկալութիւնները գրաւոր յայտնեցի կառավարութեանը, ինչպէս եւ փակման առթիւ դժգոհութիւններն էի յայտնել, որի պատճէնը նոյնպէս ներփակում եմ, որ աւելի շուտ պահանջագիր է, քան գոհունակութիւն եւ ուր ժողովրդի ակնկալութիւններն աւելի են շեշտուած, քան թէ գոհունակութիւնը: Թեմի բոլոր շրջանային խորհուրդներին էլ ուղարկել եմ եւ՛ դեկրետը, եւ՛ հրահանգը յատուկ հրահանգ-շրջաբերականով՝ փակուած եկեղեցիների առթիւ կարեւոր դիմումներ անելու տեղական իշխանութիւններին:

Փաստն այն է սակայն, որ եկեղեցիները բացւում են մեծ դժուարութեամբ, որ ակամայ ենթադրել է տալիս, թէ դեկրետը ինքնաբերաբար չէ տրուած, եւ ոչ էլ լրագրական խոստովանութիւններն են անկեղծ, այլ ամենայն հաւանականութեամբ, որեւէ ճնշման հետեւանքով՝ կա՛մ ժողովրդի, կա՛մ Մոսկուայի եւ կամ երկուսինը միասին: Փակուած եկեղեցիներից[10] քաղաքումս ցարդ բացուել են միայն եօթը, այն եկեղեցիները, որոնք պետական կամ հասարակական հաստատութիւնների են յատկացուած եւ գոյքերը գրաւուած ու վաճառուած՝ հաւանօրէն չեն վերաբացուի, չնայելով դեկրետով պարտաւոր են վերադարձնել: Ենթադրութիւնս փաստերի վրայ է հիմնուած: Քաղաքումս այդպիսի երեք եկեղեցի կայ, որոնց բացումը մերժուած է Գորիսպոլկոմի[11] կողմից, սոյնպէս նաեւ մերժուած է Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու համայնքի խնդիրը տեղի իսպոլկոմի կողմից, բայց հարցը վախճանապէս լուծուած

6 Цик – Центральный исполнительный комитет – Կենտրոնական գործադիր կոմիտե:

7 Տե՛ս ֆ.409, ց.1, գ.3145, թ.1 եւ շրջ.:

8 НКВД – Народный Комиссариат Внутренних Дел – Ներքին գործերի ժողովրդական կոմիսար:

9 **Народный Комиссариат Юстиции** - Արդարադատության ժողովրդական կոմիսարիատ:

10 1924 թ. դրությամբ թեմում փակված էին հայոց 41 եկեղեցիներ (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3144, թ.4):

11 Горисполком-Քաղաքային գործադիր կոմիտե:

չեմ համարում, հարցը վախճանապէս կը լուծուի, երբ դեկրետի հեղինակի՝ ЦИК-ի մերժման որոշումը լինի, որին արդէն բողոքել եմ յիշեալ համայնքներին դեկրետի ցուցմամբ: Երբ այնտեղ էլ մերժուի՝ խնդիրը պիտի տանենք Կովկասեան Հանրապետութիւնների միութիւն եւ ապա Մոսկուա:

Եկեղեցիների բացմամբ՝ եկեղեցու հարցը չի լուծում, անհրաժեշտ է նոր իրաւակարգի մէջ եկեղեցու համար ստեղծել իրաւական վիճակ, որ նա կարողանայ իր գոյութիւնը պահպանել իբրեւ իշխանութիւն, այլապէս նա պիտի հրաժարուի իշխանութիւն լինելուց եւ դառնայ քարոզող եկեղեցի: Վրաստանի Հանրապետութեան թէ՛ դեկրետը եւ թէ՛ հրահանգը ճանաչում են միայն անկախ եկեղեցական համայնքներ: Նոքա de jure չեն ճանաչում այդ համայնքները շաղկապող եկեղեցական կենտրոնական մարմիններ, թէեւ թոյլ են տալիս նոցա ձեւական կազմակերպութիւնները, այն է Թեմական խորհուրդ՝ առաջնորդի նախագահութեամբ:

Այսպէս նաեւ Համառուսական Հանրապետութիւնների Միութիւնն էլ չի ճանաչում ո՛չ թեմական խորհուրդներ եւ ո՛չ էլ թեմերին միացնող մարմին՝ Գերագոյն Խորհուրդ Վեհափառի գլխաւորութեամբ եւ ո՛չ էլ այլեւայլ երկրներում գոյութիւն ունեցող համահայկական եկեղեցիների միութիւն՝ ի դէմս Հայրապետի եւ Հայրապետութեան: Մի բան, որ պէտք է ձգտել՝ ըստ կարելոյն, շուտ գլուխ բերել, որպէս զի անջատական ձգտումներ ծայր չառնեն՝ օգտվելով այն հանգամանքից, որ արդէն ռուսաց Սինոդը ճանաչուած է պաշտօնապէս, թէեւ առ հարկի:

Մեր քահանայութիւնը այս տեսակէտով անվստահելի է, նա իր շահերի տեսակէտով, թէեւ սխալ ըմբռնած շահերի՝ պատրաստ է ազատութեան անուան տակ՝ յանուն կենտրոնախոյս սկզբունքի՝ իրապէս հոգեւոր իշխանութիւնից անջատուել եւ ինքնուրոյնանալ, բայց բարեբախտաբար բարոյական հեղինակութիւն չունի ժողովրդի մէջ եւ փորձերն, անշուշտ, անյաջողութեամբ պիտի պսակուին: Այս խնդրում քահանայութեան պահպանողական տարրը շատ աւելի անվստահելի է, ինչպէս ցոյց է տալիս փորձը, քան թէ ազատամիտ համարուածը: Պահպանողական քահանայութիւնը այնքան ժամանակ պահպանողական է, որքան պահանջում է այդ իր շահը: Հէնց որ իր շահերը փոքր-ինչ տուժեն՝ նա պատրաստ է, առանց խղճահարուելու, անգամ ծայրայեղ քայլեր անել՝ իսպառ եկեղեցու միութեան եւ ամբողջութեան շահերը ի նկատի չառնելով: Երկրորդ հարցը՝ առանձին համայնքների եւ նոցա միութիւնների՝ թեմական եւ կենտրոնական հոգեւոր հաստատութիւնների իրաւաբանական դէմք լինելու հարցն է, որով որոշում է նաեւ նոցա սեփականատիրական իրաւունքի խնդիրը, գոնէ այն չափով, որչափով պետութեան մէջ նոր իրաւակարգի զօրութեամբ ունեն անհատ քաղաքացիները եւ ընկերութիւնները: Երրորդ՝ կալուածական սահմանափակ իրաւունք, օրինակ՝ ըստ իս եկեղեցու եւ նրա գաւթի շէնքերի (սահմանափակ իրաւունք) վերադարձումը: Չորրորդ՝ դատարակչական իրաւունք՝ մասնագիտական դպրոց, կրօնական գրոյց եւ դասախօսութիւններ, քարոզի կատարեալ ազատութիւն, կրօնական թերթ եւ տպարան ունենալու իրաւունք եւ այլն:

Այս տեսակէտներով՝ համայնքների ներկայացուցիչների համաձայնութեամբ՝

մի իրաւաբանի հետ շուտով կը մշակենք գրութիւն Վրաստանի Հանրապետութեան կենտրոնական իշխանութեան ներկայացնելու համար: Հարկաւ կանխաւ կուղարկուի Ձեզ՝ ի տես: Ինձ այնպէս է թւում, որ կարեւոր կլինի նոյնպիսի դիմումներ անել բոլոր թեմերում՝ պահանջը ընդհանուր պատկերացնելու եւ կենտրոնական եկեղեցական իշխանութեան կողմից եւս արուելիք դիմումի ոյժն աւելացնելու համար: Իսկ կենտրոնը՝ Ս. Էջմիածինը, ըստ իս, նոյնպիսի դիմում պիտի անէ իր դիրքին համապատասխան՝ պատրաստի կանոնադրութիւն (Հայ Եկեղեցու սահմանադրութիւն) ներկայացնելով Կովկասեան Հանրապետութիւնների միութեան եւ Համառուսաստանի Հանրապետութեանց խորհրդին: Այսպիսի փորձ արել է Ուղղափառ Եկեղեցին 1923 թ., որի պատճէնը տպուած է "Церковное Обновление"[12] թերթում: Մեր դիմումները կուգան զօրացնելու ընդհանուր պահանջը եւ բարոյական ճնշում կը գործեն պետութեան վերայ: Հնարաւոր է հանդէս բերել նաեւ միւս Եկեղեցիներին՝ վրաց, կաթոլիկաց եւ այլն նոյնպիսի խնդրով: Դիմումի հետ անհրաժեշտ է նաեւ, որ Հայրապետի կողմից պատուիրակութիւն երթայ Մոսկուա եւ աշխատէ անցկացնել առաջարկուած ծրագիրը եւ նրա հաստատութիւնը արագացնել:

Վրացական մենշեւիկների օգոստոսեան ըմբոստացումները շատ վատ հետեւանք ունեցան թեմի որոշ շրջանների քահանայութեան վերայ: Տեղական իշխանութիւնները մեծ խստութիւններ գործ դրին ըմբոստացումները պատժելու համար, խստութիւններ յատկապէս գործադրուեցան հակայեղափոխական տարրերի դեմ, որոնց մէջն է, ի հարկէ պետութեան կարծիքով, հոգեւորականութիւնը, թէեւ ճշմարտութիւն այն է, որ հայ հոգեւորականութիւնը ո՛չ միայն հեռու է հակայեղափոխական լինելուց, այլ համակրող է սովետական ռէժիմին: Գօրու, Թելաւի եւ Սղնախի շրջաններում, ուր մենք բաւականաչափ հայութիւն ունենք, տեղական իշխանութիւնների կողմից կարգադրուած էր քահանայութեան՝ դադարել ժամասացութիւն եւ օրինակատարութիւն անել, եւ պատուիրուած էր չկրել հոգեւորականի տարազ, իհարկէ որոշ սպառնալիքների տակ: Հոգեւոր տարազ կրող վրացի քահանայութիւն չէր մնացել այդ եւ այլ շրջաններում, թէեւ նոցա համար այս խնդիրը դիւրին լուծելի էր այն տեսակէտով, որ վրաց հոգեւոր իշխանութիւնը հոգեւոր տարազ կրելու հարցը հոգեւորականի կամքին է թողած, իսկ հայ քահանայութիւնը կա՛մ համակերպուել եւ աշխարհիկ տարազ է կրել եւ կա՛մ խուսափել ու եկել է Թիֆլիզ ապաւինել՝ ապագայի բարեփոխութեան յուսով: Յիրաւի նոր դեկրետից յետոյ նոքա վերադարձան իրենց վայրերը՝ քահանայագործելու: Այս շրջանում շատ քահանաներ էլ հրացանազարկ են եղել, որոնց թւում նաեւ Գօրու շրջանի երեք քահանայ՝ Սուրամի Ներսէս քահանայ, Վաղայի Մեսրոպ քահանայ Խաչատրեան եւ ...[13]: Այս առթիւ իր ժամանակին շրջաբերական ուղարկեցի շրջանային խորհուրդներին, որ զեկուցագիր ներկայացնեն կատարուածի մասին, որպէս զի հնարաւոր աջակցութիւն եւ, եթէ պէտք լինի, բողոք ներկայացնեմ կենտրոնի իշխանութեան, սակայն չներկայացրին, բացի Սղնախի գործակալից, որ առիթ առնելով բողոքել եմ իր ժամանակին Վրաստանի

12 «Եկեղեցական բարեկարգում»:
13 Տեքստում այդպես է:

ЦИК-ին եւ անձամբ ներկայացել նրա նախագահին ու հանգամանօրէն խօսել ու բողոքել կատարուածների մասին: Այսպէս թէ այնպէս փաստն այն է, որ շատ տեղեր, մինչեւ իսկ շրջաններ, մնացել են առանց քահանայի, աշխարհիկ սքեմ կրող քահանայութիւնը վախենում է այժմ իսկ քահանայագործել, ինչպէս ցոյց է տալիս Գօրու Ս. Ստեփանոս եկեղեցու երեսփոխանի գրութիւնը, որի պատճէնը ներփակ ուղարկում եմ եւ՝ եթէ այսպէս շարունակուի՝ միւս շրջաններն էլ հետզհետէ նոյն վիճակին կհասնեն, քանի որ քահանայութիւնը անարգանքի եւ նիւթական կարիքի ու զրկանքի ասպարէզ լինելուց զատ, ոչինչ չէ ներկայացնում, իսկ խաչեցեալի սիրոյն անարգանքը պատիւ համարող Պօղոսին որտեղի՞ց գտնենք հոգեւորականութեան մէջ, այդպիսիների թիւը չափազանց փոքր տոկոս է կազմում:

Անցեալ Օգոստոսի 30-ին Էջմիածնից Տփխիս վերադառնալով գտայ Առաջնորդարանը գրաւուած եւ վերածուած սովետական արհեստաւորաց դպրոցի, եւ միայն իմ ննջարանս իրեղէններովս կնքուած: Գոսիսպոլկոմի կողմից յայտարարուած էր Թեմական խորհրդի ատենադպրին, որ առաջնորդի համար հինգ սենեակից բաղկացած յատուկ բնակարան է յատկացուած, որ վերադարձից յետոյ պայմանագրով կը յանձնուի իրեն: Իրօք, յատկացուած էր վայելուչ բնակարան՝ բոլոր յարմարութիւններով, սակայն ամսական 200 ռուբլի վճարով, որ ընդունելի չէր ոչ միայն սկզբունքային տեսակէտով, այլ եւ գանձարանը ի վիճակի չէր այդ բեռը տանելու, ուստի եւ մերժեցի՝ եւ նոր բողոք ներկայացրի՝ պահանջելով արագացնել խնդրի լուծումը: Միայն Նոյեմբերի 27-ին ստացայ մերժում այն հիմնաւորութեամբ թէ՝ եկեղեցին եւ եկեղեցական հաստատութիւնները պետական հիմնական դեկրետի զօրութեամբ սեփականութիւն ունենալու իրաւունք չունեն: Այժմ թէ՛ ես եւ թէ՛ բոլոր եկեղեցական խորհուրդների ներկայացուցչութիւնը նոր դիմում ենք անելու՝ խնդրելով, որ Առաջնորդարանը վերադարձուի ձրի եւ անորոշ ժամանակով օգտուելու համար եւ կամ վարձատրութեամբ, բայց հաստատութիւնների նորմայով: Առաջնորդարանների անձեռնմխելիութեան հարցը ընդհանուր բնոյթ կրող հարցերից է, որ նոյնպէս պիտի մտնի Էջմիածնի բողոքների մէջ:

Այս բոլոր անմխիթար երեւոյթների մէջ մի բան է մխիթարական, այն է ժողովրդի ջերմութիւնը դէպի եկեղեցին, թէեւ հեռու համարձակ աներկիւղ արտայայտութիւններից: Քրիստոսի մկրտութեան տօնը պետութիւնը յայտարարել էր բանւորական օր եւ խանութները բաց էին: Հայերը բոլորը փակել էին իրենց խանութները եւ եկել եկեղեցական թափօրին մասնակցելու, պէտք էր տեսնել ժողովրդի ոգեւորութիւնը, հանդէսի վեհութիւնը, տիրող կարգապահութիւնը եւ մանաւանդ չտեսնուած բազմութիւնը, որ հաւանօրէն վախճանապէս համոզեց պետութեան՝ թէ ժողովուրդը յիրաւի եկեղեցու եւ կրօնի հետ է: Չգիտեմ ինչո՞ւ վրացիք այս անգամ լքուած էին, նոցա թափօրը չափազանց աննշանակ է եղել:

Այս բոլորը գալիս են հաստատելու մի բան, որ ներկայ իրաւակարգի մէջ՝ Հայ Եկեղեցու գոյութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է ստեղծել նրա համար իրաւական վիճակ, որ հնարաւոր է միայն կենտրոնում գլուխ բերել՝ ներկայացնելով նրան ներկայ պետական իրաւական ըմբռնումներից եւ գոյութիւն ունեցող փաստա-

կան փուեալներից բղխող հիմնաւորուած մի պահանջագիր, եւ յատուկ պատուիրակութեան միջոցով առ տեղեանն պաշտպանելով այն: Այլ եւ Հայ Եկեղեցու միութեան հնարաւոր պառակտումները կանխելու նպատակով՝ արագացնել, եթէ ոչ ազգային եկեղեցական ժողովի, գոնէ ռուսահայութեան համաժողովի գումարումը:

Առաջնորդ թեմի՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

Մակագրութիւն. Կարգադրուած է. կցել գործին:

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3145, թթ. 9-10 շրջ., ինքնագիր:

Փ. 3

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԻ ՎՐԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N 157 7 ապրիլի 1924 թ.

Տփխիս

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդդ տարւոյս Յունուար 21 թուակիր, թ. 50 շրջաբերականով յայտնելով, որ խորհրդային կառավարութիւնը պատմական եւ հնագիտական վանքերի պահպանութեան համար յատկացնում է որոշ քանակութեամբ հողեր, օր. Տաթեւի, Գեղարդի եւ այլն, առաջարկում է թեմիս նշանաւոր վանքերի պահպանութեան համար դիմում անել պատշաճ իշխանութեան եւ հող ստանալ: Եկեղեցու վերաբերեալ հարցերը պաշտպանելիս եւ կամ այդ առթիւ պետութեան հետ յարաբերութեան մէջ մտնելիս առաջնորդում եմ "Церковь и Государство" Հ.հ.Ղ.հ.Հ.-ի[14] հրատարակութեամբ, որ պարունակում է 1918-1923 թ. 6-ը լոյս տեսած բոլոր դեկրետներն ու հրահանգները, այլ եւ Վրաստանի Հանրապետութեան դեկրետներով ու հրահանգներով: Գերագոյն Խորհրդիդ յիշատակած դեկրետի բնաւորութեամբ ո՛չ դեկրետ եւ ո՛չ էլ հրահանգ գոյութիւն ունի այնտեղ, նման դեկրետ լոյս տեսած չէ նաեւ Վրաստանում: Նոյնը հաստատեցին տեղիս իրաւաբանները: Ընդհակառակը, վանքերի եւ նոցա կայքի ու գոյքի, ինչպէս նաեւ պատմական հնագիտական բնոյթ կրող հարստութիւնների մասին արուած կարգադրութիւնները ի վնաս մեզ են խօսում, նոքա անցնում են կա՛մ տեղական սովետներին (81 եր. B 1-2) եւ կա՛մ ԽԿ-ի[15] հովանու ներքոյ եղող գլխաւոր թանգարանին: Այս բոլորից եզրակացնել կարելի է, որ այդ դեկրետը Հայաստանի Հանրապետութեան հրատարակածն է, որ պարտադիր է միայն իրան: Եթէ այդ հրահանգը լոյս է ընծայած СССР

14 ՌԱԴԽՀ-ի «Եկեղեցի եւ Պետություն»:

15 Народный Комиссариат Посвещения – Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ:

եւ կամ ՀՍՍՐ[16] խնդրեմ յայտնել դեկրետի N-ը, տարեթիւն ու ամսաթիւը, որով կարողանամ հիմնաւորել դիմումս:

Անկախ այս բոլորից, յայտնում եմ, որ թեմումս երկու վանք ունեմ միայն՝ Թելէթն[17] ու Շաւնաբաթը[18], որոնք մտցրել եմ վանական եկեղեցիների կարգը եւ այդպիսով նոցա գոյութիւնը պահպանել: Շաւնաբաթը երեք դեսեատին հող ունէր, որ ժողովրդին է անցել, իսկ Թելէթը միայն ամարանոցային շէնքեր ունի, որ տեղական իսպոլկոմն է օգտագործում եւ միայն բազմաթիւ կոիւներով հնարաւոր է եղել պահպանել վանահօր բնակարանը եւ ուխտաւորների ընդհանուր սրահը, չնայելով, որ յաջողուեց ինձ Ներքին գործերի կոմիսարին հրատարակել տալ ժամանակաւոր շրջաբերական, որով վանքերի եւ եկեղեցիների գաւիթների շէնքերը յանձնւում են նոցա հոգեւոր ներկայացուցիչներին:

Որպէս զի յիշեալ վանքերը եկեղեցական իշխանութեան ձեռքից իսպառ չելնեն եւ ժողովրդական եկեղեցի չդառնան կամ չփակուեն՝ կարեւոր է, որ ունենան տեղում ապրող վանահայր, ուստի Տ. Ս. ա. ք. Շիոյեանցի[19] իրենից անկախ պատճառներով հրաժարուելուց յետոյ՝ նշանակեցի կուսակրօն սարկաւագ Բարսեղ Սունդուկեանցին, որ այժմ ապրում է այնտեղ եւ որին Զատկից յետոյ մտադիր եմ աբեղայ ձեռնադրել: Նա յիսուն տարեկան է, 25 տարի ուսուցչութիւն է արել, Ներսիսեան դպրոցն է աւարտել եւ համեստ ու եկեղեցասէր անձն է, եւ որպէս զի հնարաւորութիւն ունենայ ապրել, քանի որ յիշատակուած վանքերը համարեա թէ ներկայումս ամենեւին եկամուտ չունեն, ըստ առաջին հնարաւորութեան պիտի յանձնեմ նաեւ Թելէթ գիւղի հովութիւնը: Այս է միակ ճանապարհը վանքը մեր ձեռքը պահելու:

Առաջնորդ թեմի՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3138, թթ. 6 եւ շրջ., ինքնագիր:

Փ. 4

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N158 10 ապրիլի 1924 թ.

Տփխիս

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդին

16 Социалистическая Советская Республика Грузии – Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

17 Թելեթ – հայաբնակ գյուղ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում, այժմ լքյալ:

18 Շավնաբաթ, Սեյդաբագդի, Սաղիբագդի՝ մինչեւ 1939 թ., այժմ՝ Չկալով Լոռու մարզում:

19 Սարգիս ավագ քահանա Շիոյանցը, հրաժարվելով ամուսնական կյանքից, 1926 թ. հոկտեմբերի 12-ին ընդունել է կուսակրոնություն (ՀԱԱ, 409, ց.1, գ.3169, թ.14):

Գերագոյն Խորհուրդդ փարուոյս Յունուար 25 թուակիր, Թ.74 շրջաբերականով[20] յանձնարարում է թեմական առաջնորդներին «յատուկ յանձնաժողովի եւ գիտակ անձանց խորհրդակցութեամբ քննութեան առնել բարենորոգութեան վերաբերեալ հետեւեալ հարցերը. 1. ժամագրքի, ծիսարանի, ճաշոցի եւ փօնացոյցի կրճատման եւ բարեփոխութեան, 2. սքեմի փոփոխութեան խնդիր, 3. հոգեւորականութեան ապահովութեան խնդիր եւ 4. այլ խնդիրներ, որոնք կարեւոր կը համարուին յանձնաժողովի կողմից:[21]

Վերոյիշեալի մասին զեկուցի Վրաստանի թեմական խորհրդին փարուոյս Փետրուարի 26-ի նիստում: Ժողովը գտաւ, որ առաջին հարցը՝ իբրեւ կրօնական բնոյթ ունեցող՝ պէտք է ուսումնասիրուի Ս. Էջմիածնում կարող միաբանների ձեռքով եւ ապա մշակուած նիւթը ուղարկուի թեմերը քննադատութեան: Իսկ միւս խնդիրների նկատմամբ, որոնք ընդհանուր բնոյթ են կրելու, հնարաւոր է թեմերում յանձնաժողովների կամ մասնաւոր գիտակ անձանց միջոցով ընդհանուր վերանորոգչական սխեմա պատրաստել եւ ուսումնասիրել, սակայն դրա համար էլ դրամ է պահանջում, առանց որի ո՛չ հնարաւոր է եւ ո՛չ էլ ներկայումս բարոյական իրաւունք ունենք պահանջելու ձրի աշխատանք:

Անձնապէս ես կարծում եմ, որ առաջին չորս առաջարկների բարեփոխման եւ կրճատման հարցերը հնարաւոր է լուծել՝ նախապէս ուսումնասիրելով նոցա բովանդակութեան պատմական զարգացումը, եւ որոշելուց յետոյ՝ թէ կրճատումը ըստ բովանդակութեա՞ն, թէ՞ ըստ ձեւի պիտի կատարուի: Եթէ ըստ ձեւի է, շատ դիւրին է, բայց աննպատակ, իսկ եթէ ըստ բովանդակութեան՝ շատ լուրջ եւ դժուար խնդիր է, որ հնարաւոր է կատարել միայն Էջմիածնում:

Գալով մնացեալ յիշատակուած եւ յաւելեալ խնդիրներուն՝ ես մտածում եմ եւ արդէն ձեռնարկել եմ քահանայական յատուկ Յանձնաժողովի ձեռքով՝ Տփխիսի որոշ պատրաստութիւն ունեցող քահանաներից կազմուած՝ մշակել մի ծրագիր եւ ապա գիտակ անձանց կարծիքները լսել, եկեղեցական խորհուրդների քննադատութեան ենթարկել, եթէ հնարաւոր լինի, պատգամավորական ժողովին զեկուցանել եւ ապա թէ ուղարկել Գերագոյն խորհուրդիդ:

Առաջնորդ թեմի՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

Մակագրութիւն. Եկեղեցական բարենորոգութեան խնդրի քննութեան հետ քննել: 24. IV. 1924 թ.

Անդամ՝ **ԳԻՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3133, թթ. 7 եւ շրջ., ինքնագիր:

---

20 Տե՛ս ֆ.409, ց.1, գ.3133, թթ.3-4:

21 1923 թ. հուլիսի 3-ին Հայրապետական դիվանը հանձնարարել է միաբանական ժողովին հետեւյալը. «Հայ Եկեղեցու բարեկարգութեան խնդիրը որ արծարծուել է շատ վաղուց եւ որի կարիքը զգացվում է ներկայում եւս, քննութեան առնել միաբանական ժողովում զգուշութեամբ, հեռատեսութեան եւ գործնականութեան սահմաններում, կատարելով նախապատրաստական աշխատանքներ յարմար ժամանակում գումարուելիք ազգային եկեղեցական ժողովի համար»: Միաբանական ժողովը 1923 թ. օգոստոսի 10-ի նիստում քննարկել է եկեղեցական բարեկարգությանը վերաբերող 12 խնդիր, իսկ հոկտեմբերի 30-ի նիստում՝ ընտրել Հայ Եկեղեցու բարեկարգության Էջմիածնի կենտրոնական հանձնաժողով, որի անդամներն էին Գեւորգ, Գարեգին, Ջավեն եւ Գյուտ եպիսկոպոսները (ՀԱԱ, ֆ.409, ց.1, 3133, թ.1 եւ շրջ.):

Փ. 5

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԹԻՖԼԻՍԻ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

N 229 31 յուլիսի 1924 թ.
Տփխիս

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթուղիկոսին Ամենայն Հայոց
Վրաստանի Հայոց Առաջնորդից
Յայտարարութիւն

Ներփակ մատուցանում եմ Կաթուղիկէ եկեղեցու հոգաբարձութեան յայտարարութիւնը՝ ի տնօրէնութիւն[22]: Հոգաբարձութիւնը ծրագրել է եկեղեցու վերանորոգութեան ծախսերը հոգալու համար 16 գերեզման ունենալ գաւթում, սակայն ոչ մահարձաններով, այլ գետնին հարթ հաւասար, որպէս զի գաւիթը գերեզմանատան բնոյթ չստանայ[23]: Բաց յայտմանէ պատիւ ունեմ հաղորդելու ի տեղեկութիւն, որ քաղաքը կմիջամտէ եւ թոյլ կ՚ուտայ, եթէ մենք չկարողանանք համաձայնութեամբ լուծել խնդիրը, որպիսի դէպքեր տեղի են ունեցել միւս դաւանանքի եկեղեցիների նկատմամբ:

Խորին ակնածանօք Վեհափառութեանդ խոնարհ որդի՝
Առաջնորդ Վրաստանի Հայոց՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3141, թ. 2, ինքնագիր:

---

22 Հայտնի է, որ Գեորգ Բաշինջաղյանը եղել է Թիֆլիսի Կաթողիկե Ս. Աստվածածին (Մեյդանի Ս. Գեորգ) եկեղեցու վերանորոգման հանձնաժողովի նախագահը եւ անմիջական մասնակցություն է ունեցել եկեղեցու վերանորոգման աշխատանքներին՝ կատարելով եկեղեցու ներքին նկարազարդումը (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3159, թ.4):

1924 թ. ապրիլի 24-ի զեկուցագրով Թիֆլիսի Կաթուղիկե Ս. Աստվածածին եկեղեցու հոգաբարձությունը խնդրում էր առաջնորդից միջնորդելու Մայր Աթոռի առաջ՝ իրենց համաքաղաքացի ամուսիններ Դարչո եւ Մարիամ Հարությունյանցներին, մահից հետո, Կաթողիկե եկեղեցու գավթում թաղվելու իրավունք տալու համար: Հիշյալ ամուսինները զգալի նյութական օժանդակություն էին ցույց տվել եկեղեցու վերանորոգությանը՝ իրենց վրա վերցնելով վերնատան ու խաչկալի կառուցման գործը ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3141, թ.1:

23 Ս. Էջմիածնի Գերագույն Հոգեւոր Խորհուրդը 1924 թ. օգոստոսի 30-ի գրությամբ հայտնում է Գեորգ արքեպիսկոպոսին, որ սկզբունքով ընդունվում է 16 գերեզման ունենալ եկեղեցու գավթում, սակայն յուրաքանչյուր դեպքում առաջնորդը պետք է ստանա Մայր Աթոռի թույլտվությունը: Բացի այդ, ԳՀԽ-ն, հարգելով Գեորգ արքեպիսկոպոսի միջնորդությունը, թույլ է տալիս Հարությունյանց ամուսիններին, վերջիններիս մահից հետո, թաղել Կաթողիկե եկեղեցու գավթում (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3141, թ.3 եւ շրջ.):

Փ. 6

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՋԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԹԵՄՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՅՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ ԵՂԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N 21 3 մարտի 1925 թ.
Տփխիս

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսին Ամենայն Հայոց
Վրաստանի թեմի առաջնորդ Գէորգ եպիսկոպոսից
խոնարհ յայտարարութիւն

Տարւոյս Յունուարի 10 թուակիր, թ. 2 գրութեամբ՝ զեկուցել էի Գերագոյն Խորհրդին՝ եկեղեցիների բացման առթիւ Վրաստանի Հանրապետութեան լոյս ընծայած վերջին դեկրետի եւ նրա կիրառման ընթացքի մասին: Յաւով պիտի ասեմ, որ ենթադրութիւններս ճշտւում են. այն եկեղեցիները, որոնք յանձնուած են եղել բանւորութեան եւ կամ գործկոմների տրամադրութեան տակ գտնուել՝ ցարդ եւ ոչ մէկը բացւել է: Այդ մասին դիմումներ արուել են համայնքների կողմից բոլոր ինսպանցիաներին եւ վերջապէս ծայրագոյն օրէնսդիր մարմնին՝ Համավիրական գործկոմին, որ սակայն դանդաղում է պատասխանել եւ ամեն կերպ դժուարութիւններ է յարուցում, որ բողոքաւորները հնարաւորութիւն չունենան ներկայացնելու նախագահին պարզ այն պատճառով, որ պատասխանը հաւանօրէն մերժողական պիտի լինի, որ շատ անհաճոյ է եւ՛ դեկրետը հրատարակողի եւ՛ հասարակութեան համար:

Դիմումներ արել են կենտրոնական իշխանութեան՝ Բաթումի եկեղեցու,[24] Ախալցխայի Մայր եկեղեցու,[25] Ծուլավէրի Մայր եկեղեցու[26], Թելաւի Մայր եկեղեցու[27], Տփխիսի Թանդոյանց Ս. Աստուածածնի, Կուկիոյ Նորաշէնի Ս. Աստուածածնի եւ Ս. Մինաս[28] եկեղեցիների համայնքները: Մերժողական պատասխան ստացել է

24 Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցին փակվել է կառավարության կողմից 1923 թ. ապրիլի 26-ն (ՀԱԱ, ֆ.57, ց.3, գ.525, թ.5): Այն վերաբացվել է 1925 թ. ապրիլին (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3145, թ.15): Ապրիլի 16-ին եկեղեցին օծվել է Գեորգ արքեպիսկոպոսի ձեռքով (ֆ.409, ց.1, գ.3148, թ.89):

25 Վրաստանի խորհրդային իշխանությունը 1923 թ. մարտի 20-ին բռնագրավել էր Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցին, նրա գավթում գտնվող երկհարկանի շինությունը, որտեղ զետեղված էր տեղի հոգեւոր կառավարությունը, փոխանորդական տունը, երեսփոխանի գրասենյակը՝ գույքի հետ միասին (ՀԱԱ, ֆ.57, ց.3, գ.463, թթ.18, 21): Եկեղեցին վերաբացվել է 1925 թ. հունիսի 16-ին (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3145, թ.28շրջ.):

26 Ծուլավերի հայոց երկու եկեղեցիները կառավարության կողմից փակվել են 1923 թ. մարտի 27-ին (ՀԱԱ, ֆ.57, ց.3, գ.525, թ.25):

27 Թելավի Մայր եկեղեցին (Ս. Գեորգ ավագ եկեղեցի) վրացական իշխանությունների կողմից փակվել է 1923 թ. մարտի 31-ին (ՀԱԱ, ֆ.57, ց.3, գ.525, թ.5):

28 1790 թ. հիմնադրված ս. Մինաս եկեղեցին փակվել է 1924 թ. Թիֆլիսի գործադիր կոմիտեի որոշմամբ: Շենքը հանձնվել է «Երիտասարդ լենինյաններ» կազմակերպությանը՝ շրջանային ակումբ հիմնելու նպատակով: Հետագայում շենքը օգտագործվել է իբրեւ կարի արտադրամաս

միայն Ծուլավէրի համայնքի ներկայացուցիչը, այն էլ բանաւոր, որ, ինձ թվում է, թիւրիմացութեան հետեւանք է, եւ որ կը պարզուի, երբ պատասխանը գրաւոր խնդրուի: Միւս եկեղեցիներից Թելաւի Մայր եկեղեցին վտանգի մէջ է[29], քանի որ տեղական իշխանութիւնը՝ հակառակ կենտրոնի հրամանին՝ ձեռնարկելու է քանդման, իբր թէ քաղաքի բարեզարդութեան նպատակների համար: Միջոցներ առնուած են խանգարելու այդ ծրագիրը: Մերժման դէպքում՝ բոլոր այս համայնքները որոշել են դիմել Համառուսական Միութեան գործկոմին՝ Մոսկուա:

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդային Հանրապետութեանց Միութեան գործկոմի այս նստաշրջանի ժողովները Տփխիսումն է, որի աւարտումից յետոյ (վեց-եօթն օրից) ԽՍՀ Միութեան Սովնարկոմի եւ գործկոմի նախագահները՝ Ռիկովն ու Կալինինը, պիտի այցելեն Երեւան, գուցէ եւ Էջմիածին: Մեր խոնարհ կարծիքով գուցէ եւ յարմար առիթ է, որ Ձեռդ Վեհափառութեան ներկայացուցիչները տեսակցեն նորա հետ եւ՝ ի միջի այլ հարցերի, նաեւ այս հարցի մասին խօսեն:

Խորին ակնածանօք Վեհափառութեանդ Խոնարհ որդի

Առաջնորդ Վրաստանի Հայոց՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

Մակագրութիւն. Յոյժ փութով տնօրինել:

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3145, թ. 11 եւ շրջ, Ինքնագիր:

Փ. 7

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ[30]

N 23 10 մարտի 1925 թ.

Տփխիս

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթուղիկոսին Ամենայն Հայոց
Վրաստանի թեմի Առաջնորդից
Ամենախոնարհ յայտարարութիւն

Վանայ Մայր եկեղեցու միաբան՝ բարեկրօն Խորէն քահանայ Խուցեանի տարուցս Մարտի 4 թուակիր N5 յայտարարութիւնը[31] մատուցանելով Վեհափառու-

(**Կարապետյան Ս.,** Վերադարձման պահանջ, էջ48):

29 1924 թ. ապրիլին իշխանության կողմից քանդվել է Թելավի Մայր եկեղեցու զանգակատունը (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3144, թ.5):

30 Ամենայն Հայոց Գեւորգ Ե Կաթողիկոսը 1923 թ. նոյեմբերի 9-ի N 349 կոնդակով հրահանգում էր անցնել նոր տոմարի (ՀԱԱ, ֆ.57, ց.2, գ.521, թթ.283-284):

31 Խուցյանի զեկուցագրում մանրամասնորեն ներկայացված են առկա անհարմարությունները Ս. Հարության տոնը նոր տոմարով նշելու դեպքում, ինչը հիմնականում պայմանավորված էր այն բանով, որ Վրաստանի այլազգի քրիստոնյա եկեղեցիները դեռեւս չէին ընդունել նոր տոմարը (տե՛ս ֆ.409, ց.1, գ.3148, թթ.21-22շրջ.):

թեանդ, որ վերաբերում է Զատկի փօնի կատարման ժամանակին, պատիւ ունեմ յարակցելու, որ յիրաւի Զատիկը հին տոմարով կատարելու ձգտումներ կան թեմից այլ եւ այլ վայրերում, մանաւանդ այն վայրում, ուր վրացի եւ հայ խառն ազգաբնակութիւն կայ՝ սրոյգ է: Նա հետեւանք է մեծ մասամբ այն հանգամանքի, որ Վրաց Եկեղեցու մէջ այս խնդրի շուրջը գոյութիւն ունեցող տարուբերումները այս տարի եւս մեծ պասի սկզբներին լուծուեցան յօգուտ հին տոմարի, սակայն յատկապէս Տփխիսում այդ հարցի յարուցումը հետեւանք է մի քանի քահանաների գաղտուկ վարած պրոպագանդայի՝ իրենց շահերի սխալ ըմբռնման հետեւանքով:

Այս հանգամանքն ի նկատի առնելով ամսիս 9-ին միացեալ ժողով գումարեցի Տփխիս բոլոր եկեղեցիների եկեղեցական խորհուրդներից, մանաւանդ բացատրեցի հարցի այլ եւ այլ տեսակէտներով եւ ուր՝ կարծիքների երկար փոխանակութիւնից յետոյ՝ որոշուեցաւ անպատճառ սրբութեամբ կատարել Հայրապետական կոնդակը՝ բարձր պահելով Հայ Եկեղեցու եւ Հայրապետի հեղինակութիւնը, եւ մերժուեցաւ նոյնիսկ հին տոմարով Զատիկը փօնելու մասին խնդիր յարուցանելն անգամ Վեհափառութեանդ առաջ: Հաճեցէք ի նկատի ունենալ մատուցուած խնդրի ընթերցման ժամանակ:

Խորին ակնածանօք Վեհափառութեանդ

Խոնարհ որդի, Առաջնորդ Վրաստանի՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3148, թ. 20, ինքնագիր:

Փ. 8

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N 70 6 յունիսի 1925 թ.

Տփխիս

Տարիներ առաջ, երբ եկեղեցիների Հոգաբարձութիւնները պահպանում էին ծխական դպրոցներ եւ այլ կուլտուրական հաստատութիւններ ու կառավարում էին եկեղեցական կալուածները՝ եւ՛ հետաքրքրութիւն, եւ՛ ջանք էին ցոյց տալիս ու նոցա աշխատանքի պտուղներն էլ ակներեւ էին: Այժմ՝ երբ այդ հաստատութիւնների ղեկավարութիւնը եւ կալուածների կառավարութիւնը պետութեանն է անցել՝ Հոգաբարձութիւնները զգում են իրենց շատ նեղ սահմանի մէջ եւ նոցա վերջին տարիների գործունէութիւնը դարձել է անհետաքրքրական ու աննշմարելի եւ՛ իրենց, եւ՛ հասարակութեան համար, քանի որ մոմավաճառութեան գործի ղեկավարութիւնից անդին չէ անցել: Եկեղեցական խորհուրդներն այս վիճակից հանելու եւ հոգեւոր դասը ինքնագործունէութեան հրաւիրելու նպատակով բարւոք ենք համարում մոմավաճառութեան եւ եկեղեցու միւս ներքին արդիւնքների ղեկավարութիւնն ու գանձումը բաժանել եկեղեցական խորհուրդների միւս կարեւոր ֆունկցիաներից, ինչպէս եւ հնումը

բաժանուած է եղել, եւ յանձնել եկեղեցիների միաբանութեան հետեւեալ պահանջներով. ա. Միաբանութեան վրայ բարոյական պարտք է դրում եկեղեցին մաքուր եւ վայելուչ վիճակի մէջ պահել, այս տեսակէտով երկու եւ աւելի քահանայ ունեցող եկեղեցիները պարտաւորւում են անպայման առնուազն երկու դպիր ունենալ, իսկ մի քահանայ ունեցողները, եթէ չկարողանան երկու դպիր պահել՝ պիտի ընկերանան մի այլ մերձաւոր եկեղեցու հետ, որպէսզի հնարաւորութիւն ունենան թէ՛ առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւնները եւ թէ՛ պատարագը երկու դպրով վայելուչ կատարել: Երբ բնականաբար պատարագը հերթով է, մէկում կից՝ միւսում ճաշու պէտք է կատարուի: Բ. Պէտք է դպիրների վիճակը բարւոքել, նոցա ռոճիկը մեծացնել, եկեղեցու բոլոր սպասաւորների զգեստները վայելուչ դարձնել եւ ընդհանրապէս եկեղեցու բոլոր մանր կարիքները հոգալ: Գ. Եկեղեցու արդիւնքն աւելացնել եւ եկեղեցու բոլոր ծախսերը հոգալուց յետոյ, որոնց թւում նաեւ թեմական Հոգեւոր իշխանութեան պահպանութեան ծախսը՝ մնացեալը յատկացնել քահանայութեան պահպանութեանը՝ Հայ Եկեղեցու կանոնական սկզբունքի եւ ներկայ պետութեան նորմալ կանոնադրութեան համաձայն: Դ. Հաշուապահութիւնը օրինակելի վարել եւ հաշիւներն ու բիւրճէն ամսէ ամիս կօնտրոլի ենթարկել թէ՛ թեմական իշխանութեան եւ թէ՛ համայնքից ընտրուած եւ Հոգեւոր իշխանութիւնից ճանաչուած եկեղեցական խնդրի կողմից, այս վերջինին է վերապահում՝ զեղծումներ երեւան հանելիս՝ միջամտել եւ գործը ծխական ժողովի քննութեան ու վճռին առաջարկել:

Այսպիսով Տփղիսի քահանայութիւնը ստանում է ո՛չ իրաւունք, այլ մի ծանր պարտականութիւն. նա հրաւիրում է ինքնագործունէութեան եւ իրական պատասխանատուութեան իր եկեղեցու արտաքին բարեգարդութեան ու բարեվայելչութեան համար թեմական հոգեւոր իշխանութեան հանդէպ: Այս նոր պաշտօնը նա ունեցել է Հայ Եկեղեցու կանոնական եւ սովորոյթի իրաւունքով, ինչպէս եւ յիշեալ եկամուտների մասնատէրն է եղել անցեալում, որից առնուել է կրթական, բարեգործական եւ նման կարեւոր նպատակների յատկացնելու համար եւ որին վերադարձնում է այսօր այդ պահանջների կեանքից վերացման հետեւանքով:

Հասարակական միտքը թիւրիմացութիւնից զերծ պահելու եւ ընտրուողների առաջ նորա ապագայ գործունէութեան հեռանկարը պատկերացնելու նպատակով՝ համառօտակի ծրագրենք նաեւ եկեղեցական խորհուրդների անելիքները (էական ֆունկցիաները): Եկեղեցական խորհուրդները ազատուելով մոմավաճառութեան մանր ու անարժէք աշխատանքից, որ մշտական կռիւների աղբիւր է եղել միաբանութեան եւ երեցփոխանների մէջ՝ հրաւիրուած են նոր ստեղծագործական աշխատանքի, այն է - համայնքի եւ եկեղեցու մէջ քրիստոնէական կեանք հանդէս բերելու: Նոքա պարտաւորւում են նոր կալուածներ ձեռք բերել, ի դէպս վերադարձման՝ հները կառավարել, կամաւոր տուրքերը կազմակերպել եւ այլ հնարաւոր միջոցներ գտնել, որոնց արդիւնքներով իր կոչման բարձրութեան վրայ եղող միաբանութիւն հրաւիրել, յատուկ քարոզիչ ունենալ, երգեցիկ խումբ պահել, կրօնա-պատմական եւ եկեղեցական գեղարուեստի վերաբերեալ դասախօսութիւններ եւ զրոյցներ կազմակերպել՝ հաւատացեալի մէջ ճշմարիտ կրօնական զգացում եւ կրօնական գիտակ-

ցութիւն զարգացնելու համար եկեղեցու հիմնական վերանորոգութիւնը կատարել՝ հետամուտ լինելով հայկական գեղարուեստական ոճի զարգացման թէ՛ նկարչութեան եւ թէ՛ ճարտարապետութեան նկատմամբ, եկեղեցական երգի մշակման, հաւաքման եւ եկեղեցական երաժշտութեան զարգացման նպաստել, եկեղեցականի կրթութեան մասին հոգալ եւ եկեղեցական ներքին գիտակցական կարգապահութիւն հանդէս բերել: Ահա նպատակները, որի համար արժէ աշխատել, եւ եկեղեցական խորհրդի անդամները պիտի ընտրուին նոքա, որոնց համար արժեքաւոր եւ գրաւիչ են այս նպատակները:

Այս բոլորն ի նկատի առնելով է, որ հրաւիրում եմ եկեղեցիների միաբան քահանայութեանն իբրեւ փորձ՝ մի բարի եւ օգտակար ձեռնարկութեան նուիրուելու եւ պարտաւորութիւն եմ դնում քաղաքիս բոլոր աւագերէցների վրայ զեկուցանել եղած կարգադրութեան մասին եկեղեցական խորհուրդներին եւ ըստ առաջին հնարաւորութեան նաեւ ծխական ժողովներին նոցա համաձայնութիւնն առնելու համար:

Յոյս եւ հաւատ եմ տածում, որ սիրով պիտի ընդունուի մեր այս տնօրինութիւնը, որ միայն եկեղեցու եւ համայնքի կեանքի զարգացման եւ բարեզարդութեան նպատակն ունի՝ եւ՛ քահանայութեան, եւ՛ եկեղեցական խորհուրդների ու ծխական ընդհանուր ժողովների կողմից:

Առաջնորդ թեմի՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3148, թ. 100 եւ շրջ., ինքնագիր:

Փ. 9

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹԻՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԲԱԹՈՒՄԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՇԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

N 95 11 յունիսի 1925 թ.
Տփխիս

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթուղիկոսին Ամենայն Հայոց
Վիրահայոց թեմակալից
Ամենախոնարհ յայտարարութիւն

Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցու յետ ստացման եւ նրա վերանորոգութեան յաջողութիւնը պարտական է տեղի համայնքը յիշեալ եկեղեցու խորհրդի նախագահ պ. Արշակ Մարտիրոսեանի անդուլ, շրջահայեաց եւ աներկիւղ գործունէութեան, որ

զգալով Բաթումի համայնքը՝ անձամբ իմ բերնով միջնորդում է Ձերդ Վեհափառութեան, որ հաճէք Ձեր Հայրապետական օրհնութիւնը շնորհել նրան:[32]

Խորին ակնածանօք Վեհափառութեանդ խոնարհ որդի՝

Առաջնորդ Վիրահայոց՝ **Գէորգ Եպիսկոպոս**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3145, թ. 22, ինքնագիր:

Փ. 10

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ԹԵՄԻ ՈՐՈՇ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ՉՎԵՐԱԲԱՑԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

N 108 14 յունիսի 1925 թ.

Տփխիս

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդին

Վրաստանի խորհուրդների կենտրոնական գործադիր կոմիտէի (ՑԻԿ) 1924 թ. Նոյեմբերի 21-ի թ. 124 դեկրետի (տպուած "Заря Востока"-ի 25/XI-ի 1924թ. N 736) եւ այդ դեկրետի գործադրութեան առթիւ Արդարադատութեան եւ Ներքին գործոց ժողկոմների լոյս ընծայած հրահանգի համաձայն (տպուած «Կոմունիստ»-ի 7/XII-ի 1924թ. N 280)՝ տեղական գործկոմները անհրաժեշտօրէն պիտի վերադարձնեն բոլոր փակ եկեղեցիները համայնքներին, երբ եօթից ոչ պակաս հաւատացեալներ դիմեն եւ խնդրեն եկեղեցու բացումը: Սակայն չնայելով բազմիցս եղած դիմումներին՝ Տփխիսի Հալաբարի ս. Մինաս եկեղեցին, Թանդոյանց եւ Կուկիոյ Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցիները եւ Շահումեան քաղաքի (Շուլավեր) Մայր եկեղեցին չեն բաց անում եւ արդէն բանաւոր մերժում է ստացուել Տիֆ[լիսի] Գոռիսպոլկոմի կողմից Կուկիոյ Նորաշէնի նկատմամբ[33]: Երբ Վրաստանի կենտրոնական գործկոմն էլ մերժի, թէեւ հաւանական չէ, պիտի դիմեմ Կովկասեան Հանրապետութեանց Միութեան գործկոմին (За кЦИК), լաւ կլինէր, որ Գերագոյն Խորհուրդն էլ՝ իմ զեկուցագրիս վերայ հիմնուելով՝ դիմէր նոյն հաստատութեան հարցի յարուցումն ու պահանջը գօրացնելու նպատակով: Մերժման մասին կը հաղորդուի իր ժամանակին Վրաստանի թեմական խորհրդի կողմից իմ բացակայելուս հետեւանքով:

Առաջնորդ թեմի՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3145, թ. 21, ինքնագիր:

---

32 1925 թ. հուլիսի 6-ին Վեհափառ Հայրապետը օրհնության կոնդակ է շնորհել Արշակ Մարտիրոսյանին (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3145, թ.23 եւ շրջ.):

33 1925 թ. հոկտեմբերի 5-ի գրությամբ Վրաստանի կենտգործկոմը թեմական խորհրդին տեղեկացրել է, որ Կուկիո Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգվել ու հատկացվել է պիոներներին, հետեւաբար չի կարող վերադարձվել խորհրդին (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3153, թ.17):

Փ. 11

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑԵԱԼՆԵՐԻՆ՝ ՍԱՀԱԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆԻՆ[34] ՍԱՏԱՐ ԼԻՆԵԼՈՒ ԿՈՉՈՎ

N 3 2 յունուար 1926 թ.
Տփխիս

Մշակն արժանի է իր վարձին – Յիսուն տարի մի համայնքի հոգեւոր հայրը, ղեկավարն ու մխիթարիչն լինել, յիսուն տարի մի քանի սերունդների դպրոցական դաստիարակը լինել, յիսուն տարի կրօնական գրականութեան մէջ իր խոշոր լուման ձգել եւ այժմ՝ ծերութեան հասակում, մի քանի ծանր հիւանդութիւններից հիւծուած՝ ամիսներով անկողնին զամուել եւ՝ թէ՛ իր ծխի, թէ՛ հասարակութեան գիտակ լայն խաւերի եւ թէ՛ ընկերների կողմից՝ անուշադիր, անմխիթար եւ անխնամ մնալ՝ ծանր եւ յուսահատական է գործիչի համար եւ ամօթ՝ մեզ համար:

Այդ անձը Բարձր. Սահակ ա. քահանայ Սահակեանն է: «Լաւ է ուշ՝ քան երբէք» դարձուածքը թո՛ղ ղեկավար լինի մեզ եւ հրաւիրէ կատարելու մեր քրիստոնէական, ծխական, ընկերական եւ որդիական բարոյական պարտականութիւնը դէպի նա, մանաւանդ այս տօնական օրերին, որ հանգստացնենք մեր խիղճը եւ ջրյուսահատեցնենք հասարակական գործիչներին:

Կամաւոր նուէրներ ընդունում է ի թիւս այլոց նաեւ գրութիւնս ներկայացնող՝ քաղաքացի Եսայի Մարկովիչ Դոլուխանեանը:

Առաջնորդ թեմի՝ **ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3163, թ. 1, ինքնագիր:

Փ. 12

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՋԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N55 30 մարտի 1926 թ.
Թիֆլիզ

Նորին Վեհափառութեան Տ.Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսին Ամենայն Հայոց Թիֆլիզի թեմի Առաջնորդից

Ամենախոնարհ յայտարարութիւն

34 Սահակ քահանա Սահակյանը եղել է Թիֆլիսի Թանդոյան եկեղեցու հոգեւոր հովիվը: Երկու տարի ձրիաբար ծառայել է թեմական խորհրդում՝ իբրեւ անդամ: Նրան Ամենայն Հայոց Վեհափառի կողմից շնորհվել է քահանայական լանջախաչ եւ կամիլավկա կրելու իրավունք (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3138, թ.32):

Տարւոյս մարտ ամսի 9-ին Վանքի Մայր եկեղեցում ժողով գումարեցի Թիֆլիզի բոլոր եկեղեցիների եկեղեցական խորհուրդների, թիֆլիզաբնակ թեմական պատգամաւորների եւ միաբան քահանայութեան մասնակցութեամբ՝ զեկուցանելու Ս. Էջմիածնի Գերագոյն Խորհրդի լրիվ կազմի տարւոյս Փետրուարին կատարած աշխատանքների մասին:

Զեկուցումս աւարտելուց յետոյ, բացատրելով այն ծանր կացութիւնը, որ ստեղծել է տոմարի հարցը Էջմիածնի եւ մանաւանդ Ձերդ Վեհափառութեան համար, եւ ի նկատի ունենալով Գերագոյն Խորհրդի լրիւ կազմի նոր որոշումը՝ առաջարկեցի այս հարցը իսպառ լիկուիդացիայի ենթարկել:

Ժողովը ցաւ յայտնեց, որ Թիֆլիզի թեմը ստեղծուած պայմանների հետեւանքով ցարդ չէ կարողացած մի անգամ ընդ միշտ նոր տոմարի անցնել, բայց շատ տեսակէտներով զգալով նոր տոմարի անցնելու անհրաժեշտութիւնը՝ որոշեց խնդրել Ձերդ Վեհափառութեան ներողամտութիւնը, որ այս տարի եւս Զատիկը ստիպուած է լինելու կատարել հնով՝ յայտնելով եւ խոստանալով միանգամայն, որ Զատկից յետոյ նոր տոմարի անցնելը Թիֆլիզի համար կլինի վախճանական եւ անփոփոխ, ինչ դժուարութիւններ էլ յառաջ գալու լինեն: Եւ խնդրեց թեմիս Առաջնորդին իր այս որոշման թարգմանը հանդիսանալ Ձերդ Վեհափառութեան առաջ:

Վեհափառ Տէ՛ր, մինչեւ իմ վերադարձս թեմական խորհուրդը, չնայելով ինձնից ստացած գրութեան՝ ժողով չէր գումարել, իմ վերադարձիցս յետոյ արդէն ուշ էր Զատկի հարց յարուցանել, քանի որ նոր տոմարով արդէն մեծ պասի մէջ էինք, հետեւաբար միակ հնարաւոր ելքը այս որոշումն էր, որ արուել է ժողովում: Հարցի այսպիսի վախճանական լուծումը մեր թեմում՝ հաւատում եմ, որ Ձերդ Վեհափառութեան պիտի միխթարէ եւ Ձեր ներողամտութիւնը շահէ կատարուածի նկատմամբ[35]:

Գերագոյն Խորհուրդի կատարած աշխատանքների նկատմամբ զեկուցումից յետոյ յիշեալ խառն ժողովի «դրական վերաբերմունքը» պատիւ կունենամ առանձին հաղորդելու:

Խորին ակնածանօք Ձերդ Վեհափառութեան խոնարհ որդի՝

Առաջնորդ Վիրահայոց **ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3166, թթ. 16 եւ շրջ., ինքնագիր:

---

35 Վրաստանի հայոց թեմի առաջնորդին ուղղված 1926 թ. ապրիլի 16-ի N 268 գրությամբ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգեւոր Խորհուրդը հույս է հայտնում, որ Ս. Զատկի տոնակատարությունից հետո թեմը անվերապահորեն կանցնի նոր տոմարին, քանի որ Հյուսիսային Կովկասի եւ Նոր Նախիջեւանի թեմերը, մատնանշելով Վրաստանի թեմի օրինակը, իրենք եւս չեն ցանկանում անցնել նոր տոմարի (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3166, թ.17 եւ շրջ.): Ս. Զատիկի տոնը 1927 թ. եւս նշվել է հին տոմարով: Վրաստանի հայոց եկեղեցական խորհուրդը 1927 թ. ապրիլի 1-ի շրջաբերականով ծանուցում է քաղաքի ավագ եւ ժամօրհնող քահանաներին, որ «Վեհափառ Հայրապետը, ընդ առաջ գնալով հայ հաւատացեալ ժողովրդի ցանկութեանը, հեռագրով թոյլատրում է այս տարի Ս. Զատիկը կատարել հին տոմարով Ապրիլի 24-ին» (ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3154, թ.8):